

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյաջե կամբարատան մէջ:

(Պատրաստողացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մթն է հայերը չեն բաղմանում:—Ներքին տե-
սութիւն: Նամակ խմբագրին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւն: Շվեյցարիա: Իտալիա: Ֆրանսիա: Անգլիա:
—«Մշակի» հեռագիրներ:—Հայտարարութիւններ:
—Բանասիրական: Թիւրքաց հայերի տնտե-
սական դրութիւնը:

ՄԻԹԷ ՀԱՅԵՐԸ ՁԵՆ ԲԱԶ- ՄԱՆՈՒՄ

Մեր երէկվայ առաջնորդող
յօդուածին մենք կուզենայինք ա-
ւելացնել հետեւեալ դատողութիւն-
ները:

Եթէ ճշմարիտ յայտնվի այն
թւանշանը, որ հրատարակված է
եղել «ՀԱՅԿԱՅ» լրագրում կովկա-
սեան հայոց ազգաբնակչութեան
թիւ մասին, այն ժամանակ ստիպ-
ված կը լինենք խոստովանել որ
հայերը, համեմատելով մեր երկրի
միւս ազգութիւնների հետ, շատ քիչ
են բազմանում: Մենք կը սպասենք
մեր առաջարկութեան արդիւնքին,
կը սպասենք որ մեր թղթակից-
ները հաղորդեն մեզ այն թւերը
անդրկովկասեան հայոց ազգաբնա-
կութեան մասին, որ մենք նրան-
ցից խնդրել ենք: Յոյս ունենք որ
նրանք այդ կը կատարեն և մի և

նոյն ժամանակ յոյս ունենք որ
ուրա լրագրում հրատարակված
թւանշանը սխալ կը յայտնվի:

Հատ ցաւալի կը լինի, ի հարկէ,
եթէ մեր թղթակիցները չը կա-
րողանան կատարել մեր խնդիրը,
—և այն ժամանակ մեզ կը մնայ
սպասել եկող պաշտօնական ժո-
ղովրդագրութեան: Բայց երբ կը
կատարվի մեր երկրի ազգաբնա-
կութեան ընդհանուր ժողովրդա-
գրութիւնը,—մենք չը գիտենք:

Եթէ ընդունենք հայոց ժողո-
վրդի դանդաղ բազմանալու կա-
րելութիւնը, կարող ենք այդ երե-
ւոյթը միայն մի բանով բացա-
տրել, այն է, որ հայոց ամբողջ
ինչքան էլ ապահոված լինէր
նիւթապէս, շատ հաշուով է և պը-
սակվում է շատ ուշ, իսկ մեր
խնտելիքներին, որ նոյնպէս շատ
ուշ է պսակվում, պսակվում է
միայն այն ժամանակ, երբ նրա
ամբողջ ոյժերը արդէն սպառվել
են:

Մենք ի հարկէ այդ միտքը
յայտնում ենք, որպէս հաւանական
միտք և հաստատ չենք պնդում
նրա ճշմարիտ լինելու վրա:

Մենք դարձեալ կը սպասենք
թւանշանների և կրկին խնդրում

ենք մեր թղթակիցներին կատա-
րել մեր անցեալ համարի առաջ-
նորդող յօդուածում յայտնած
միտքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նոր-Նախիջևան, 8 մայիսի

Ցանկանալով «Արարատեան ընկերութեան» տա-
րեկան անդամ գրելի, ուղարկում եմ ձեզ հինգ
տարվայ վճարը կանխիկ 100 ռուբլի, խոստանա-
լով հինգ տարին լրանալուց յետոյ էլ ամեն տարի
հատուցանել նշանակել 20 ռուբլին: Կը յուսամ
որ իմ օրինակին կը հետեն նաև իմ քաղաքա-
կիցներէն շատերը:

Երեցիկիսան Ս. Գէորգ եկեղեցու քարութիւն
Նիկողայոսեան Աստուծան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Իգդիր, 2 մայիսի

Պատեհաւոր միջոց ունէի ներկայ ամսոյ մէկին՝
Իգդիրու երկսեռ ուսումնարաններում խօսել ա-
շակերտացը և աշակերտուհեաց «Արարատեան ըն-
կերութեան» յուսակով նպատակների և ազգոգ-
տաւէտ գործողութեանց վրա, պատմելի նոցա մի
քիչ մանկական ճաշակով: Աշակերտը և աշակեր-
տուհիք մեծից սկսած մինչև ամենայն տիպի փոքր
այնչափ համակրութիւն յայտնեցին որչափ որ ես
բնաւ չէի ակնկալում:

Նիւթն է, որ գոյրջանում է գիշերներով և դիպ-
չելով ծառերի սառցանոց տերեւներին, գայացնում է
քաղցը ցողանման հատիկներ: Այդ կերակուրը մի
լաւ դեղ է համարվում թղթային հիւանդութեան
դէմ: Մենք պարծենում ենք մեր կովկասեան գի-
նիւնիւն ու մի, բայց ոչ մի գինի, իմ կարծիքով, չէ
կարող համեմատվել խաբէր գինի հետ, որ
ստացվում է մի գերազանց խաղողից: Ես ա-
ւելիք ունեցայ նորեւում ինքս այդ գինին փորձե-
լու: Նրա գերազանց համը, նրա արօքը, և մի և
նոյն ժամանակ թնդութիւնը աննկարագրելի են:
Կարող եմ միայն այն ասել, որ նա իմ կարծիքով,
միջին տեղն է բռնում խաբէրի և մաղի միջին
գինիների մէջ: Խաբէր գինի հայերը չեն բաւա-
րանում գինեգործութեամբ պարագլուխ, այլ
պարագլուխ են նոյնպէս ընդարձակ շէրամապա-
հոթեան մը: Նոյնտեղ ցանկում է և առաւօրէն
հաւաքվում է բամբակ և բրինձ: Երամապա-
հոթիւնը տարածված է Նեղօկիայում և Տը-
րապիզոնում, բայց չեղանակութեան հայրե-
նիքը Գիւարբէրիւն է (Տիգրանակերտ), որ նոյն-
պէս նշանաւոր է բրինձի լայնատարած դաշտե-
րով: Սերաստիա մեծ քանակութեամբ բուս-
նում է ձաւկնդեղ (СВЕКЛОВИЦА), Յիւրբիւր
Կիւկիւմ յայտնի են խաղողով, նոյն տեղերը,
նոյնպէս թուրթում և Ալան յայտնի են իրանց
ընտիր, բազմատեսակ մրգերով, մանաւանդ թու-
թում: Պարտիզանութիւն (բոստաններ, բանջարա-
նոցներ) երեւելի է թէ՛ Վանի և թէ՛ Երզրումի վի-
լայէթներում, բայց լայնատարած Տիգրանակերտի
կողմերը, որտեղ պլանտացիան նշանաւոր է իր
քաղցը համով սեխը և իր թէ՛ հրէշաւոր մեծու-
թեամբ և թէ՛ համով ձմերուկը: Արտւում են որ
եթէ մի 8—10 տարեկան երեխայ նստի ձմերուկի
վրա, ոտները գետնին չեն հասնում:

Ես առաջարկեցի նոցա, որ իւրաքանչիւր ոք
նրանցից որչափ որ կուզէ յօգուտ «Արարատեան
ընկերութեան» փող թող ընէ, նոքա համաձայնե-
ցին ամենայն սիրով որով այս մատաղասակ
մանուկներից կարողացայ կուգէկներով հաւաքել
յօգուտ «Արարատեան ընկերութեան» 23 ռուբլի
փող, որն որ ծրարելով ի ծոց նամակիս ձեզ
կուղարկեմ, և հասուցանել կը խնդրեմ որ
հարկն է, բարեհաճելով նաև հրատարակել զայս
ձեր պատուական թերթին միջոցաւ: 2 ռուբլի
առանձին կ. կանայեանցը նուիրեց:

Մանկասիրանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այստեղ ամեն բանի
մէջ մեծ թանգութիւն է: Երաշտը, մուկն ու մա-
րախը սարսափելի վնաս են տուել: Ազգիւրը ցամաք
անցաւ, իսկ քաղաքում այս օրերս անձրեւ է գալիս,
գիւղերից դեռ հաստատ լուր չունենք»:

Խնդրում ենք մեր թղթակիցներին նամակների
մէջ բաւական տեղ թողնել ուղղելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՎԷՑԱՐԻԱ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին նո-
րերս «Մշակի» մէջ տպված Յիւրիսի մեր
թղթակցի նամակից, Շվեյցարիայում այժմ
խնդիր է յարուցած կրկին մոցնել Շվեյցա-
րական հանրապետութեան մէջ մահվան
պատժի օրէնքը: Մտքերը շատ յուզված են
Շվեյցարիայում այդ խնդրի պատճառով: Լի-

Հայաստանում բնակվում են գլխաւորապէս ե-
րեք ցեղեր՝ թիւրքերը, հայերը և քիւրդերը: Քիւրդը
խաչնարած է և մասամբ արհեստաւոր, թիւրքը
մասամբ երկրագործ է և մասամբ արհեստաւոր,
իսկ հայը ամեն բան է: Նա խաչնարած է, երկրա-
գործ է, արհեստաւոր է և մեծ քաղաքներում վա-
ճառական, կապալաւու և արդիւնագործ: Քիւրդի
կիրք մասամբ մամակցում է մարդու պարագլ-
մուցների մէջ, նոյնպէս պարագլում է մի քանի
արհեստներով, ինչպէս օրինակ՝ գորգեր, շալեր և
կարպաններ գործելով, թէ՛ քիւրդ կանանց գոր-
ծածը իր նրբութեամբ երբէք չէ կարող համե-
մատվել հայ կանանց ձեռքի աշխատանքի հետ:
Թիւրք կիրք բոլորովին ոչինչ չէ անում և թէ՛ աղ-
քատ և թէ՛ հարուստ դասակարգերում առեղծված
է միմիայն մարդու բաւականութեան համար: Թիւրք
կիրք հարեմի դարին է միայն: Թիւրքերը թէ՛ և
պարագլում են երկրագործութեամբ, մեղուկապ-
հոթեամբ և մասամբ պարտիզանութեամբ, բայց
երբէք չեն հասնում հայի աշխատանքութեան և
նրանց աշխատանքի գերազանցութեան: Թիւրքը
պարագլում է միայն հետեւեալ արհեստներով, կաշ-
ւագործութեամբ, կոշիկակարութեամբ, այն էլ կո-
պիւս, երկու կրունկների վրա կոշիկներ (Վիւմա)
պատրաստելով, որ ստորին ժողովուրդն է գործա-
ծում, կամ ձիու թամբեր (թամբեր), լիւմենի ու
ձիու զարդարանքներ գործելով: Մի քանի տեղ
թիւրքերը ղնագործութեամբ էլ պարագլում են,
բայց նրանց չինած զէնքերը, հայի չինած զէնքերից
լրանց յատկութեամբ ստոր են: Նոյնպէս թիւրքերը
փայտի վրա կուպիտ քանդակագործութիւնն են ա-
նում: Հայերը սրանից էլ օգուտ են քաղում: Նը-
րանք թիւրքերի փայտեայ քանդակագործութիւննե-
րը (զգալներ, մանուկների օրորոցներ և այլն) առ-
նում են էփան գնով, մաքրում, գեղեցկացնում,

ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Հրապարակական դատախազութիւն, որ տեղի ու-
նեցաւ Թիֆլիսի Արհեստաւորների ընկերութեան
մէջ մարտի 11-ին, և Թիֆլիսի Սօցիալիստի դահլի-
ճում մարտի 25-ին, 1879 թվին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի երկրագործութիւնը, այդ
բառի լայն նշանակութեամբ, չը նայելով որ եր-
կրը շատ վատ կառավարված է և որ իր դիրքով
նա կործան է բոլոր բուսականութեան երկրներից,
կարելի է ասել որ համեմատաբար շատ ծաղկած
դրութեան մէջ է, նոյն բերրութեան և հայ ժո-
ղովրդի աշխատանքութեան շնորհով: Հայաստա-
նում ծաղկում է բուն երկրագործութիւնը, նոյնպէս
այգեգործութիւնը, գինագործութիւնը, պարտիզանութիւնը
(огородничество), չերամա-
պահութիւնը, մեղուկապահութիւնը, և այլն: Եւ ամ-
բողջ երկրագործութիւնը, քիչ բացառութեամբ,
հայերի ձեռքում է: Վանի նահանգը և Ալաշ-
կերտի դաշտավայրը յայտնի են ցորենով և
գարիով, Գրանք են հայկաթում հացը ամբողջ

նում են ժողովներ, հասարակութիւնը կուտակ-
թիւններ վրա է բաժանուում, նվէյցարկայի
զրկութեամբ լրագրութիւնը այդ հարցով
է զբաղված: Մի քանի կանտոններում արդէն
եղել է ձայնաւուծութիւն այդ խնդրը դրա-
կան կամ բացասական կերպով վճռելու հա-
մար: Մահվան պատժի օրէնքը նվէյցարիա-
յում կրկին մոգնելու կուտակիցները կըրա-
կաններն են գլխաւորապէս: Այժմ լրագրի-
ները հաղորդում են Բէրնից, որ մայիսի 11-ին
կիրակի օրը, այդ քաղաքի հրապարակի վրա
հաղարարու բազմութիւն և զանազան ըն-
կերութիւններ 30 դոշակներով հաւաքվեց
դորա համար որ յայտնի իր հակախոսութիւնը
մահվան պատժի դէմ: Մի քանի հազար մար-
դիկներէջ բաղկացած ժողով կազմվեց, ընտր-
վեցաւ նախագահ, ասվեցան անթիւ ճառեր և
սկսվեցան վիճարկումներ: Միտնդը վճռ-
եց պահանջել որ հետեւեալ կիրակի, մայիսի
10-ին ընդհանուր քուէարկութեան ժամա-
նակ, քուէարկուի ըր բացասական կերպով
պատասխանեն մահվան պատժի օրէնքի առա-
ջարկութեանը, այսինքն որ քուէարկին մահ-
վան պատժի օրէնքի դէմ: Հրապարակական
ժողովի այդ վճիռը ընդունվեցաւ բազմու-
թեանից ողորդած ծափահարութիւններով:
ձշմարտ, զարմանալի կը լինէր, եթէ աղա-
տաւիտ և մարդասէր նվէյցարիան կրկին ըն-
դունէր մահվան պատժի օրէնքը: Հաւանական
է որ այդ օրէնքի ընդունվելու կողմը կը լի-
նեն միմիայն պ. պ. կղերականները, որոնք
միշտ և ամեն տեղ յայտնվում են իրանց մար-
դասիրութեամբ:

Ջարմանալի է, ի՞նչ են արել և ի՞նչ էին
անում միշտ հոգեւորականները, նոյն իսկ եկե-
ղեցու սպասաւորները: աւետարանի քարոզիչ-
ները այն վարդապետութիւնից, քրիստո-
նէսութեանից, որ կարելի է անուանել սիրոյ,
ներողութեան, մարդասիրութեան վարդապե-
տութիւն: Հոգեւորականներ չէին, որոնք միշտ
գործ էին ածում թոյն և խանգալ, որպէս ա-
մենհաստատ զէնք իրանց նպատակին հա-
նելու համար, հոգեւորականներ չէին, որոնք
միշտ պաշտպան էին ստրկութեան, հոգեւո-
րականներ չէին, որոնք հնարեցին ինկվիլի-
ցիայի, անլեւի, սարսափելի, անաստուած
ամանջանքներ:

Եւ եթէ այժմ կրկին մոգրած կը լինի նվէյ-
ցարիայում մահվան պատժը, դորանով նվէյ-

ցարիան պարտական կը լինի հոգեւորական-
ներին և նրանց կուտակիցներին:

Մեր լուսաւորված դարում, պէտք է խոս-
տովանվել, քրիստոնէական եկեղեցին գտնվում
է կուտակած սպասաւորների ձեռքում:

Գ. Ա.

ԻՏՈՒԼԱ

Նորերում երեւելի Նոտայի հերոս Գարի-
բալդի հրատարակեց մի գրվածք, որի մէջ
յիշում է այն բոլոր վերանորոգութիւնները,
որ իր կարծիքով հարկաւոր են Նոտայի
համար: Նրա հին ընկերը, ունգարացի Տիւրր
որ Գարիբալդիի հետ միասին պատերազմում
էր Նէպոլի գործերի դէմ, դիմեց Գարիբալ-
դիին մի նամակով, որի մէջ, հիմնվելով նրա
գրվածքի հանրապետական ձգտումների վրա
յիշեցնում է երեւելի հերոսին, որ երբ նա
նուաճում էր Նոտայի փոքրիկ պետութիւն-
ները Նոտայի միութեանը ձգտելով, նրա
նշանաբան այս խօսքերի մէջ էր պարունակ-
վում. «Նոտայի, ազատութիւն և Վիկտոր-
Էմանուէլ»: Տիւրր յիշեցնում է, բացի սորա-
նից, որ երբ Գարիբալդի կառավարում էր որ-
պէս դիկտատոր, ազատված երկիրները, նա
կառավարում էր նրանց թագաւորի անունով
և միշտ կուտակեց էր միապետական ձեւի կա-
ռավարութեան Նոտայի համար: Ունգարա-
ցի Տիւրր գրուցանում է այդպիսով իր նախկին
ընկերը ընդդէմ չը գնալ, չը վնասել Վիկ-
տոր-Էմանուէլի յաջորդին, Նոտայի այժ-
մեան թագաւորին, Հումբերտին: Այդ նամակի
վրա Գարիբալդի պատասխանեց մի կարճ հե-
ռադրով հետեւեալ բովանդակութեամբ. «Հան-
րապետականները Նոտայից Հումբերտ թա-
գաւորի ամենահաստատ թաւաններն են»:

Նոտայի հերոսը շատ հիւանդ է, ինչպէս
հաղորդում են լրագրիները: Անգլիական «Daily
News» լրագրին գրում են որ Գարիբալդիի ա-
ռողջութիւնը վերջին օրերը քիչ լաւացաւ:

Ապրիլի 20-ին (մայիսի 12-ին), Ֆլորէն-
ցիայում սկսվեցաւ քաղաքական դատ այն բան-
ւորների դէմ, որոնք անցեալ տարի Պիլա քա-
ղաքում, եկեղեցու առջև գտնված հրապարա-
կի վրա ձաքող ունէր էին գցել: Մեղադրե-
վածները երեք են. մակարօնի գործարա-
նում ծառայող Կոյի բանօրը, կոշկակար

Պրանկիոլի և մեքենաւոր Վոչչինտի:
Նար և մի չորրորդ մեղադրված Լաֆրէզինի
որ վերջ տուեց իր կեանքին անձնապահու-
թեամբ: Մեղադրական ձառի մէջ պոլիտորը
հաստատում է որ վերոյիշեալ բանւորները
սկզբից դիտաւորութիւն ունէին գցել ունգար
նոյն իսկ եկեղեցու մէջ, ժամատացութեան
ժամանակ երբ եկեղեցին լի էր բազմութեամբ
բայց չը կարողացան կատարել այդ յանցաւոր
դիտաւորութիւնը: Պոլիտորը հաստատում է
որ յանցաւորները դրված են եղել միջադ-
գային սոցիալական ընկերութիւնից: Մեղադր-
վածները, ընդհակառակը, հաւատացնում են
որ երբէք գցած չեն հրապարակի վրա ձա-
քող ունէր, բայց չեն հերքում որ անդամ են
միջադգային սոցիալական ընկերութեան:

ՅԲԱՆՍԻԱ

Այն լուրը, որ բռնապարտեանները հա-
տատ վճռել են պ. Պիլաիին սէնատորական
ընտրութիւնների կանդիդատ ներկայացնել,
բոլորովին ստոյգ զուրս եկաւ. պ. Պիլաի այն-
տեղ բազմութիւն կուտակիցներ կարող է գրա-
նել, և այդ շնորհիւ այն բազմութիւն կօրսի-
կայի բռնապարտեաններին, որոնք այնտեղ պո-
լեյական ոյժ են կազմում. բայց հանրապե-
տականները յոյս ունեն, որ կուէի մէջ իրանք
յաղթող կը հանդիսանան. նրանք կամենում
են պ. Նուալէօլին կանդիդատ առաջարկել:

Ժողովրդական լուսաւորութեան միւնիստրի
պ. Ֆերրինան-Լաթի նախագահութեան ներ-
քոյ գումարվեցաւ Միլիթայի միջադգային ըն-
կերութեան ժողովը. այս մարդասիրական ըն-
կերութիւնը մեծ պատիւ է բերում Բէլգիա-
յին, որովհետեւ նրա սկզբնապատճառը նա
եղաւ. Պրանսիան մեծ համակրութեամբ ըն-
դունեց այդ սկզբունքը, և այսօր հաղարար
անդամներ կան նրա մէջ, որոնց ամենաեռան-
դուն և ամենաջերմ պարագլուխներից մէկն
էլ պ. Ֆերրինան—Լաթի ժողովրդական լուսա-
ւորութեան նախարարն է: Նախարար մի հե-
տաքերի ձառ կարգաց, որի մէջ նա բացառ-
րեց ընկերութեան մարդասէր ու փեմ նպա-
տակը, և աշխատեց ցոյց տալ այն միջոցները,
որոնցով կարելի է հասնել նրան. ընկերու-
թեան գլխաւոր նպատակն է ոչնչացնել կեն-
տրոնական Միլիթայի սեւերի մարդաւաճառու-
թիւնը, որով և վերջ տալ այն սարսափելի

սպանութիւններին, որոնք ծագում են այդ
բանից, և որի մասին եւրոպական ձանապար-
հորդները այնչափ սեւեռ լուրեր են բերում:
Սրանից յետոյ պ. Ֆ. —Լաթի առաջարկեց
երկու զանազան կէտերի վրա երկու
կայարաններ հիմնել, որոնցից մէկը կը լի-
նի Գամբոնի Ֆրանսիական գաղթականների
մօտ արեւմտեան ափերի վրա, իսկ միւսը կը
լինի արեւելեան ափերի վրա, ոչ հեռու ան-
գլիական, բելգիական և երկպառակն բնակու-
թիւններից: Նա կարծում է, որ ընդամենը
այդ երկու հիմնարկութիւնների վրա ծախս
կը լինի 150,000 Ֆրանկ: Այդ գումարից
100,000-ը կարելի է կառավարութեանից խնդ-
րել, իսկ մնացածը կը լրացնէ ընկերութեան
զանաւարներ:

Երբ պ. միւնիստրը վերջապէս իր ձառը
անդամներից մէկը բարձրացաւ ամբիոնը, և
ասաց, թէ նա մեծ յոյս ունի, որ այս ողոր-
մածութեան և բարձր մարդասիրական գործը
կը ստիպէ Պրանսիային յետ չը մնալ միւս աղ-
գերից, և նա առատաբար կը շնորհի այն
ամենը, որ սուրբ գործի է ծառայում, և բացի
այդ՝ այս առաջին անգամը չէ, որ Պրանսիան
օրինակ է տալի բոլոր աիեղբայրներն այսպիսի
վեհանք գործերի մէջ. Պրանսիան բոլոր իր
ձիւղը կը թափէ Միլիթայի վայրենի ցեղերին
խնարհեցնելու եւրոպական լուսաւորութեան
և քաղաքակրթութեան առաջ:

Լուսաւորութեան նախարարը պաշտօնապէս
յայտնեց, որ պ. Փիլա-Ֆերրին խոստացել է
կառավարութեան ուշադրութիւնը դարձնել
այս բանի վրա. տայ Աստուած, որ ընդհա-
նուրի համակրութիւնը քաջալերի նրան այդ
սուրբ գործին բարի վախճան տալու. Պրան-
սիան այս խաղաղասէր պատերազմով այնպէս
կը փառաւորվի, ինչպէս նա ոչ մի պատերազ-
մով չը փառաւորվեց:

Մայիսի 7-ին սէնատի ձախաղովմանները
մի նիստ ունեցան. այդ նիստին նրանք միա-
ձայն հաւանութեամբ վճռեցին Փարիզ վե-
րադառնալ. իսկ առ այժմ ժամանակաւորա-
պէս նրանք կը շարունակեն իրանց նիստերը
Տիւրիի դահլիճում:

ԱՆԳԼԻԱ

«Standard» լրագիրը իր Լահօրի թղթակ-
ցից մի հեռագիր է ստացել, որի մէջ վերջին

նորացնում են և աւելի թանկ են ծախում: Ինչ-
պէս երկրագործական բոլոր նուրբ պարագանքե-
րը, դիւնգործութիւնը, չեքամպաւորութիւնը, կաթ-
նային ամանութիւնը հայերի ձեռքումն է, այն-
պէս էլ Հայաստանի բոլոր նուրբ արհեստները
հայի և հայուհու ձեռքերից են դուրս գալիս:
Կաթնային ամանութեան վրա խօսք գցելով,
պէտք է յիշել պատեղ հայի և հայուհու ձեռքով
պատրաստվող բազմաթիւ և ընտիր պահուիչ
օրինակ ձիւրքի, խոտորջուրի և Համէնի բուրդի
պէս պահուիչ, կամ խոտորմի նախնայի բաւ տէ-
վիճակի բարակ թելերից բաղկացած պանիրը,
կամ բարակ, թղթի պէս, թիթեթից պատրաստվող
սերը (СЫРЕН), վերջապէս կօնսերվի պէս
պատրաստվող չորացած մածուցը, որ կարելի է ե-
փել և նրանից թան շինել (բաղկալման): ձշմարիտ,
զարմանալի և հրաշալի են այն բոլոր աշխատանք-
ները, որ կատարում է հայուհին: Բացի անա-
յին, ծանր ամանութիւնից, անային հոգեւորից լու-
րաբանչիւր հայ աղջիկ և կին, հարուստ թէ աղ-
քատ, արհեստներով է պարագում: Իւրաքանչիւր
հայ ընտանիքը հագնում է իր տան մէջ պատ-
րաստած քաթմանի, կտաւի շապիկները և բուրդի
հագուստեղէնները: Բացի սորանից հայուհին գոր-
ծում է, մանում է, քաթմանեղէններ, կտաւեղէն-
ներ, քանդակեղէններ, բուրդի և մետաքսի կեր-
պաններ է գործում և ծախելու համար: Եւ այդ
բոլորը նա գործում է անային, փայտեայ ամենա-
նահագեցական մեքենաներով, որոնք չինվում են
տանը նոյն իսկ հայերի ձեռքով: Եթէ եւրոպա-
ցին տեսնի հայուհին ձեռքով գործված քա-
թմանի բարակ շապիկները, կամ բամբակի բըր-
դոտ, բարձրիկ համար շապիկները և բրդոտ
երեսորդները, որ մեծ մասամբ Տրապիզոնի,
Եւքոկիայի և Երզնկայի հայուհիներն են

պատրաստում, կամ Բիթլիսի հայ կանանց ձեռ-
քով գործած կտաւեղէնները (ПОЛОТНО), Սիւսի
հրաշալի գորգերը, խալիւսները և կապեղները,
Երզնկայի բամբակագործութիւնը, նոյն տեղի
բուրդեայ գուլպաները, որոնց վրա ինչպէս մազա-
ղաթի վրա, կարելի է թանաքով գրել, Վանի ֆու-
լիկի աղիւս մալից գործված չալիքը, նոյն մալից
պատրաստվող անձրեղ չանցիկանող կերպաներ,
որոնք ձանապարհի վերաբերւումն են համար են գոր-
ծածվում, Եւքոկիայի, Տրապիզոնի, Տրապիզոնի և
Գիւրլիքի շքեղ մետաքսագործութիւնը,—
այդ բոլորը տեսնելով, ասում եմ, եւրոպացին չի
հաւատալ թէ այդ կերպանները դուրս են եկել
Հայաստանի կանանց ձեռքերից, գործվեցան ամե-
նաանհապեղական մեքենաների վրա, և ոչ թէ եւ-
րոպական մի գործարանից... Հայ կինը ունի իր
աղիւս բոլոր յատկութիւնները. նա աշխատասէր,
խնայող և հաշուող է: Աղքատ հայուհին այդպէս է
սկսում իր աշխատանքը. Նա խնայում է մի փոք-
րիկ գումար, այդ գումարով առնում է, դիւրեք,
մի պուդ բուրդ (կամ բամբակ) մանում է այդ
բուրդը, և որովհետեւ մանածը աւելի թանգ արժէ,
քան թէ հումը, նա փոխանակում է մանած նիւ-
թի մի պուդ մէկ ու կէս պուդի վրա, կրկին մա-
նում է և ստանում է դարձեալ երկու պուդ, և
այն, մինչև որ անքան ունի որ կարող է արդէն
սկսել կերպաններ պատրաստել: Հայ կինը Հայա-
ստանում մի բուլէ չէ կարող մնալ առանց աշխա-
տանքի: Գիւրեք մի կնոջ դատարան են կանչում
մի գործի համար. հայուհին դիմել որ ժամանակ
պէտք է կորցնի,— և նա դատարան գնալով իր հետ
տանում է իր թիւ, բուրդ կամ բամբակ մանելու
մեքենան: Մինչև որ նրան կը կանչեն, մինչև որ
դատարանը կը դուրս գալ, ժամանակ չը կորցնելու
համար հայուհին դատարանի մէջ նստած մանում է,

գործում է... Այդ մեղ չէ յիշեցնում մի թէ աշխա-
տասէր գերմանուհու, չէ յիշեցնում մեղ Գերմա-
նիա, որտեղ կանայք հասարակութեան մէջ էլ,
թատրոնում, հրապարակական դատախօսութեան մէջ
գուլպաներ են գործում... Հեռու Արաբիայում, կտր-
ված լուսաւորված աշխարհից, աշխատասէր հայ
աղջը իրագործել է իր ձեռով կնոջ աշխատանքի
խնդիրը... Հայաստանի բոլոր վարդապետները, բոլոր
արհեստաւորները հայեր են: Հիւանդ, քարտաշներ,
պղնձագործներ, երկաթագործներ, ոսկերիչներ,
փորագործներ, փայտի վրա նուրբ քանդակագործ-
ներ, արծաթագործներ, նկարիչներ, ճարտարապետ-
ներ,—բոլորն էլ հայ են: Եւքոկիայ յայտնի է
իր պղնձագործութեամբ և մասամբ արծաթագոր-
ծութեամբ. այդ պղնձի նուրբ ամանները նորանով
են յայտնի, որ ամենաթեթեւ կրակով կերակուրը
նրանց մէջ եւ է գալիս: Այդտեղ չինվում են չա-
մադաններ, դղաններ, եկեղեցական անօթներ: Եր-
կաթագործութեամբ և նուրբ, զանազան գաղտնի-
ներ ունեցող կողպէքներով յայտնի են Տրապի-
զոնը և Երզնկան: Երզնկայում մէջ ամենաուրբ
կերպով փորագրում են ոսկով պողպատի վրա
(СТАЛЬ): Գիւրլիքի յայտնի է իր գեղեցիկ
ոսկեթիւ և արծաթեթիւ ամանածնեղով: Հայերն
են պատրաստում Թիւրքիայում ամենալաւ դէն-
քեր. այդ դէնքերը այն յատկութիւն ունեն, որ
նրանց կարելի է պահել անձրեղի տակ և ջրի մէջ
անգամ դնել, բայց այնու ամենայնիւ հրացանը
կամ ատրճառակը չեն փչանում և թաց լինելուց
յետոյ նրանցից կարելի է իսկոյն արձակել: Այդ
դէնքերի մետաղի բաղադրութիւնը այնչափ վար-
պետութեամբ է պատրաստած, որ եթէ սխալ-
մամբ հրացանը կամ ատրճառակը երկու անգամ
լցնէք, այնու ամենայնիւ կարող էք արձակել և
դէնքի բուրդ չի ճաքի: Պատերազմի ժամանակ Եր-

զրումը հայերը տեսան եւրոպական և ամերիկական
կատարեալագործված հրացաններ և իսկոյն սկսեցին
իրանց չինվող հրացանները կատարեալապէս նմա-
նեցնել Մարտինի, կամ ուրիշ սխտեմայի հրա-
ցաններին: Երզնկայի հարուստ անեղում դուք կը
տեսնէք պատերը և առաստաղները փայտից նուրբ
կերպով քանդակագործված. դա հայերի ձեռքի
աշխատանքն է: Վարպետները բոլորն էլ հայեր
են. ոչ մի թիւրք վարպետ չը կայ: Հայերն են
ամբողջ երկրում միակ ճարտարապետ տնէրը:
Դորան թող վկայ լինի այն, որ ոչ թէ միայն հա-
յոց եկեղեցիները հրաշալի շինուածները, բայց և
մուսուլմանների բոլոր մզկիթները և միւնարները
հայ ինքնուս ճարտարապետներն են կառուցել:
Հայաստանի եկեղեցիներում և մամաւոր տներում
կը տեսնէք պատերի և առաստաղի վրա նկար
չ ու թիւններ, —դրանք ինքնուս հայ նկարիչների
ստեղծագործութիւններն են: Ետո ժամանակ չէ Եր-
զումի վիլայէթի մի գեղաւոր հայ, առանց երբեք
տեսած լինելու եւրոպական կատարեալագործված
երկրագործական մեքենաները, ինքն իր խելով
հնարել էր մի հնձելու մեքենայ: Բայց ի հայրի
այդ գեղար անուշադիր է թողել թիւրք կառավա-
րութիւնը: Վերջապէս հայերը քանդակագործում են
զանազան փոքրիկ և գեղեցիկ ամանաւոր պիւստիկ
հարկաւոր իրեղեցիներ մարմարեօթից, փոքր դիւրեղ
մարմարեօթից եկեղեցիների և մզկիթների օրինակ
ներ են շինում, եղբիւրից շինում են դանակի կո-
թեր, սև սաթից փոքրիկ չուբուխներ և մուշտը
տուկներ: Այդպէս, ուրեմն արհեստների մեծ մասը
ամենանշանաւոր և ամենաուրբ արհեստները թիւր-
քիայում հայերի ձեռքումն են: Այստեղ աւելորդ
չեմ համարում յիշել մի մասնաւորապէս, Խոսր
չի դէֆէնդիկ, կարծիք թիւրքերի մասին, որ 1862
թին նա յայտնել է իր «Սիւսի-Եւքոկի-Երզնկա»

այդ անդամները անհաշիվաբար խաղաղութան վերաբեր-
ութեամբ մի քանի հետաքրքիր տեղեկու-
թիւններ են հաղորդում: Հիւսիսային մէջ
ասում են, որ երկար սպասելուց յետոյ, վեր-
ջապէս էմիրը արժանացրեց անգլիական բա-
նակին իր այցելութեանը: Նրան ընդունեց
գեներալ Սամուէլ Բրէն, որը յետոյ նրան
ներկայացրեց բոլոր զինուորականներին:
Հետեւեալ օրը մի գլխավոր (ժողով) կա-
յացաւ, որին մասնակցեց և նոյն իսկ էմիրը,
և այդ շատ հասկանալի է, որովհետեւ այդ
ժողովում պէտք է վճռէր Անգլիական մա-
հաւան և կենսի ինքիւրը: Բայց ժողովը գու-
մարկելուց մի օր տուած էմիրի և պ. Կալա-
նեարի մէջ տեղե ունեցաւ մի երկար խօսակ-
ցութիւն: Այդ խօսակցութեան մէջ առա-
ջարկեցան հաշտութեան բոլոր պայմաննե-
րը, և էմիրը սիրով ընդունեց Անգլիայի բո-
լոր առաջարկութիւնները:

Միւս օր ընդհանուր ժողովի մէջ պաշ-
տօնապէս համաձայնութիւն կայացաւ, որ
Կանդահարի կողմից անգլիական սահմանը
ընդարձակելի մինչև Կոմակ-Սամանը, որով և
Անգլիան տէր կը դառնայ Կոմակի անցքին
և Պիշին կոչված հովիտին: Բացի այս Անգ-
լիան ստանում է Կուրումի հովիտը մինչև
Չատուրգարանի կիրճը, և Քիրէրի անցքը
մինչև Լօարջի:

Բրիտանիան իրաւունք է ստանում ունե-
նայ իր գործակատարը Կանդահարում: Բայց
ոչինչ տեղեկութիւն չը կայ թէ արդեօք անգ-
լիացիք մի և նոյն իրաւունք էլ ստանում են
և Հերատի ու Կաբուլի վերաբերութեամբ
թէ ոչ:

Հաւատարմութեամբ են, որ իբր Եսկուր-խանը
շատ զօհ է մնացել այն պայմաններին, որ ա-
ռաջարկել են նրան: Վեռ ոչինչ հաստատ
լուր չը կայ թէ Եսկուր-խանը ստորագրեց
հաշտութեան պայմանները թէ դեռ ոչ: Շա-
տերն ասում են, որ նա հաշտութեան պայ-
մանագիրն միայն Կաբուլ վերադառնալուց
յետոյ կը վաւերացնի իր ստորագրութեամբ:

Էմիրը կարծ միշտ կը մնայ անգլիական
բանակում, որովհետեւ նա շտապում է կա-
րելի եղանակ չափ շուտ վերադառնալ Կա-
բուլ, ուր նրա ներկայութիւնը անհրա-
ժեշտ է: Պ. Կալանեարի, որ էմիրի հետ
կը վերադառնայ Կաբուլ, իբրեւ բրիտանական
պատգամաւոր, պէտք է ուղեկցելի մի խումբ

բրիտանական հեծելազօրով: Բայց թէ քանի
մարդուց պէտք է բաղկացած լինի ուղեկցող
խումբը, այդ թիւը յանձնած է էմիրը վճռա-
հատութեամբ: Եթէ էմիրը չը կամենայ, որ
մի մեծ խումբ ուղեկցի բրիտանական պատ-
գամաւորին, այն ժամանակ անգլիացիք իրանց
բարեկամական յարաբերութիւնները չը փա-
սելու համար, մի փոքրիկ խումբ կուղարկեն
պ. Կալանեարիի հետ:

Ուրեմն Անգլիական զօրքն էլ վճռե-
ցաւ, և միշտ յօգուտ անգլիացիներին: Անգ-
լիան ոչինչ քայլ չէ անում առանց նախադ-
րուշութեան, առանց խոր քաղաքական նը-
բամտութեան և առանց մատչեմութեան
ճիշդ հաշիւների: Ուրեմն որչափ էին սխա-
լում նրանք, որոնք կարծում էին թէ ահա-
նական հաղթան էլ մի և նոյն անմիջեմար
հետեւանքին կը հասնէ Բրիտանիային, ինչ-
պէս նրան երբեմն հասցրեց Ամերիկայի Միա-
ցեալ-Նահանգների հարցը: Ընդհակառակը
անգլիացիք իրատ առան անցեալ դիպու-
ծից, որ ապագայում աւելի խոհեմութեամբ
գործեն. և պէտք է խոստովանած, որ այդ
նրանց կատարելապէս յաջողեց: Անգլիան այ-
ժմ այնպէս հմուտ ու փորձառու է, որ ոչ
թէ միայն իր պատերազմներից է շահվում,
այդ բաւական չէ, նա շահվում է և ուրիշ
ներկ պատերազմներից: Կարող է հարցը մեզ
պարզ ապացոյց է մեր ասածներին:

Եթէ Հնդկաստան, երբ դու էլ մի օր կար-
ժանանաւ քո վիճակից Ամերիկայի բաղդին...

Եւրոպական լրագիրները մի սխալ լուր էին
տարածել, իբր թէ Կալի գեներալ նահան-
գապետ Բարտոլոմէի գերի է ընկել Տրանս-
փալի բօքսիտի ձեռքը: Կալից հաղորդում
են, որ այնտեղ ամենքը զարմանում էին թէ
Եւրոպական լրագիրները ինչ աղբիւրներից են
քաղել այդ լուրը: Ընդհակառակը նախադ-
րուշութեամբ լուրերը հաղորդում են, որ նա ոչ
թէ միայն գերի չէ ընկել բօքսիտի ձեռքը,
այլ թէ նա սիրալիք ընդունելութիւն է դը-
տել նրանց բանակի միջով անցած ժամանակ,
և մի քանի օրից յետոյ ողջ և առողջ նա
Պրէտորիա է հասել, որտեղ նրան մի փա-
ռաւոր ընդունելութիւն էր սպասում:

Կալի թղթակիցը յոյս է յայտնում, որ
բրիտանական մեղադրութեան դիպուստիան վեր-
ջապէս յաղթող կը հանդիսանայ: Առ այժմ
Պրէտորիա քաղաքը պաշարման մէջ է զրան-

վում: քաղաքի մի քանի փողոցներում բար-
րիկաղներ են շինվել, բանտը պատել են կրկնակի
պարիսպներով և սաստիկ ընդդիմադրութիւն են
գործում: Պրէտորիան պաշարող զինուոր
սաստիկ կարեւորութիւն էր զգում սիր Բարտո-
լոմէի մէջ, և նա շատ յարմար միջոցի հա-
սաւ: Ամենքը յոյս ունեն, որ այսօր վաղը քա-
ղաքը անգլիացիների ձեռքը կանցնի:

Անգլիացիք զուլումների հետ երկու ձախա-
տամարտ ունեցան. այդ կռիւներից առաջի-
նը, որ եղաւ Սլօանի մօտ, շատ սաստիկ էր:
Գնդապետ Վալթերէյ, առիւծի պէս կռուե-
լուց յետոյ, բռնելով իր որդուն իր բազուկ-
ների մէջ, առանդեց հողին դաշտում ստա-
ցած մահախիթ վերքից: Այս քաջ ծերու-
նին, որ արդէն նշանաւոր էր եղել իր քա-
ջութեամբ դեռ Նորմի պատերազմում, բոլոր-
ովին դէմ էր Նատալի կուսակալ Քեօֆիլ
Նէպտոնի բռնած քաղաքական ընթացքին:
Եւ ցաւալին այն է, որ նա զօհ գնաց այն
քաղաքականութեանը, որին նա մինչև իր
վերջին շունչը ընտանի մնաց: Զուլումների
կռիւր դեռ մի որոշ եղրակացութեան չը
հասաւ:

«ՄՇԱԿ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Վ. ԱԳՈՒԼԻՍ. Գ. Երկրորդ անգամ դուք
խնդրում էք, որ ձեր նամակը տպւի իբրեւ
առաջնորդող յօդուած: Մենք ձեզ խորհուրդ
կը տանք աւելի համեստ լինել:

—ԱՍԽԱՆՆԵՐ. Գ. Ն. Խմբագրութեան բոլոր
անդամները շնորհակալութիւն են յայտնում
ձեզ «Մշակ» № 69-ի մէջ տպված Ախա-
ցիայի նամակի համար:

—ՇԱՐՈՒՎ. Գ. Զ. Նամակը զամբիւղը զը-
ցեցինք:

—ՆՈՒՍԻ. Գ. Վ. Տ. Ե. Կարդացե՛ք վերեւի
պատասխանը:

—ՍՍՐԱԶՐԱՐՈՒՄ. Ա. Ա. Յօդուածի շարու-
նակութիւնը ստացանք: Տպագրութիւնը կը
սկսենք մօտաւորապէս մի շաբաթից յետոյ:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 14 մայիս. «НОВОЕ Вре-
мя» լրագիրը հաղորդում է, թէ այն անձը,
որ փորձեց Նրէնտէնին սպանելու, կալանա-
ւորված է Նիէվում յանցաւորը փախել էր
Վարշավա, այնտեղից էլ Նիէվ ուր նա բժշ-
կել էր տալիս իր ոտքը, որը նա փնտել էր
վայր ընկնելով ձիուց, այն ժամանակ երբ նա,
աշխատելով անհետանալ իր խուզարկուների
աչքից, փախչում էր գետեղբայրով: Նիէվի հի-
ւանդանոցում պրօֆէսոր Կարալիեւի նրա ոտ-
քի վրա մի թիթեւ օպերացիա արաւ:
Այժմ նա կալանաւորված է: Այսօր Գեներալ
Արմիրալ Նրիմ է ուղևորվում: Մովսիս մի-
նիստութեան կառավարիչ Լէսօսկին ուղե-
ւորվում է Սեվաստօպոլ զինելու Սև ծովի ե-
զերքի ամրոցները:

ՄՕՍԿՎԱ, 14 մայիս: Ռէպի մայիսի 14
գիշերը 30 տարեկան շնորհով հազնված մի
կին աշխատում էր համալսարանի եկեղեցու
դրան մօտի պատից մի յայտարարութիւն
կայցնել, բայց նրան կալանաւորեցին: Հետե-
ւեալ գիշերը կալանաւորվեցաւ մի ուրիշ կին,
որը աշխատում էր մի ինչ որ թուղթ կայցնել
լապտերի սիւնից:

ԲԵՐԼԻՆ, 14/26 մայիս: Վիլհելմ կայսրը
բօլաբարացոց իշխանին մայօրութեան աստի-
ճան շնորհեց:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳ, 10 մայիս: Պետական
բանկի 5% տոմսերը առաջին ըրջանի արժէ
97 ր. 25 կ., երկրորդ 96 ր. 25 կ., երրորդ
96 ր. 25 կ., չորրորդ 96 ր. 25 կ., ներքին
5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ
243 ր. 50 կ., երկրորդ 239 ր., արեւելեան
առաջին փոխառութեան տոմսեր արժէ 94 ր.,
երկրորդ 94 ր. 50 կ., ոսկի 8 ր. 56 կ.:
Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23¹/₁₆
պէս: Տրամադրութիւնը շատ ամուր է:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

դուր» վերնագրով գրելի մէջ: Հեղինակը, այժմ
խուրդ-փաշա և մուշիր, ուղարկված էր որպէս
պաշտօնական անձն, այսինքն որպէս քարտուղար,
այն յանձնաժողովի որ պաշտօն ունէր Պարսկաս-
տանի և Թիւրքիայի սահմանագծերը որոշելու: Գր-
քը թարգմանել է ռուսերէն լեզուով պ. Կամազով
և 1877 թ. հրատարակել է նրան այսպիսի վերնա-
գրով «Сяхетъ-Намъ-И-Худудъ. Описание Путе-
шествія по турецко-персидской границѣ. С.
П. Б. пер. М. Гамазова. 1877 г.» Այն ինչ է
ասում հեղինակը վանի նահանգի մասին. «Այստեղ
բոլոր արեւմտեւորները և երկրագործները մեծ
մասը հայեր են: Թիւրքերը բաղկանք են միայն,
և այն էլ մի քանի հոգի միայն: Մինչև անգամ ոչ
թէ վարդապետներ և օրական մշակներ չը կան
մահմադականների մէջ: Հայերը աշխատող ժողո-
ւորը են, իսկ մահմադականները ընդհակառակը:
Առաջ նրանք ապրում էին իրանց հողերի արդիւն-
քով, կամ պետական ծառայութեան մէջ էին: Մին-
չև այժմ չեն կարող հրաժարվել ազատութեան
նից և անգործ ժամանակ են անցնում, մեծ մա-
սամբ պանդոկներում և օրհանդեսներում: Մահմա-
դականները (թիւրք և քիւրդ) անհող կեանք են
վարում, բայց տեղեկով այդ տեղակ կեանքի
ապարդիւն լինելը, վերջապէս, յոյս կայ որ ստիպ-
ված կը լինեն գործով պարսպելու» Այն մահմա-
դականի կարծիքը մահմադականների մասին:

Նշանաւոր է որ ճայ ժողովուրդը իրագործել է
գրեթէ իր բոլոր պարագմունքները մէջ աշխա-
տանքի բաժանութիւնը: Արհեստները անց-
նում են հօրից որդի: Ոչ թէ միայն այլ և այլ քա-
ղաքներ պարագմում են այլ և այլ արդիւնագոր-
ծութեան ձեւերով, բայց և դիւղեր մասնաւորած
են իրանց աշխատանքը: Բաւական է միշտ եր-
բում վերաբերել Չիքիկ գետը, որ միմայն հիւ-

ներից է բնակեցրած, կամ նոյն վիլայէթի Օգնի
գիւղը, որի բոլոր բնակիչները քարտաշներ են:
Թիւրքերի հայերը պարսպում են նոյնպէս և
քաղցրեղենների և այլ ուտելիքների պատրաս-
տութեամբ: Արապկերտ յայտնի է իր քաղցրահամ
պատերիներով, Գիւրի, Թիւրքում և Ալի իրանց
չորացած մրգերով, մահմադար հուշակոթ է այդ-
տեղի չորացած թուփը: Հայերի ձեռքիցն է դուրս
գալիս Գիւրէի քիւրի սուլունը (չորիչիւն),
հայերն են պատրաստում մի քանի ապուր (КОП-
баса) և նոյնպէս երկեղի բաւատուրման այդ
սփական մանդեղն չորացած կոնսերվը, որ պահ-
վում է առանց փչանալու մի ամբողջ տարի: Հա-
յերի ձեռքիցն է դուրս գալիս և դառուրման
(չորացած ոչխարի միս) որ գործ է ածում թիւրքաց
զօրը, որպէս ուտելիք պաշարեղէն, մի տեղից
միւս տեղ չուրու ժամանակ: Հարուստ մահմա-
դականները գործ են ածում այդ չորացած մսե-
ղէնները, մահմադար բաստուրման, իրանց օր ու ջի
(պասի) ժամանակ, որպէս ամենամեղաբար կե-
րակուր:

Որտեղ հայերը ապրում են, ամեն տեղ յայտն-
վում են նրանց ձիւղերը, ընդունակութիւնները,
անտեսական, բնկերական ոգին և կուրտուրական
(քաղաքականութեան) յատկութիւնները: Բայց ու-
ղարկութիւնն արժանի է, որ աւելի էլ յայտնվում
են այդ յատկութիւնները, երեսն են դալիս աւելի
պարզ և համարիչ կերպով, որտեղ հայերը ապրում
են անխառն, ազատ քիւրդի կամ թիւրքի ապակա-
նող աղբեղութիւնից: Գորան ամենապաւ ապացոյց
կարող են լինել այսպիսի տեղեր, ինչպէս Զէյ-
թուն, կամ խոտ օր զուր: Խոտը զուրի Եօթ
թէ ութ դիւղեր կրկնապայտում են զուտ հայոց
ապրից, թէ և կրթօլի հաւատով, բաղիկացած
փոքրիկ հանրակրթութիւն: Զարմանալի բարօր-

թիւն և ընկերական ոգի է տիրապետում խոտո-
ջուրի համայնքի մէջ: Կօպիտ, մեծ մասամբ անգրա-
գէտ լեռնաքանակ խոտոջուրցիներ, որոնց ներկա-
յացուցիչներին մենք շատ անգամ տեսնում ենք
Թիւրքում հայերի կողմից (Վոնչի) պարագմունքի
մէջ, ունեն իրանց հայրենիքում հետեւեալ ընկերա-
կան կանօնները. երբ նրանցից մի ընտանիքի հայր
գնում է օտարութեան մէջ, նրա համայնքը պար-
տաւորվում է պահել և կերակրել իր հաշուով գաղ-
թական: Ընտանիքը, մինչև նրա վերադարձը, կամ
մինչև որ նոյն ընտանիքի մի արական զաւակ հասակ
կառնի և կը կարողանայ իր աշխատանքով պահպանել
իր ընտանիքը: Երբ որդին մեծանում է և կարողանում
է իր ընտանիքը իր ձեռքերի վաստակով պահել,
կամ եթէ պանդուխտ հայը չէ մեռնում օտարու-
թեան մէջ այլ վերջը վերադառնում է հայրենիքը,
—հասարակութեան հաշուով պահված ընտանիքը,
որպէս վարձատրութիւն իր համայնքի կողմից ի-
րան արած բաւութեան փոխարէն, պարտաւոր է
մի օր և է նուէր անել եկեղեցուն: Հասարակու-
թեան սովորութիւնները այնպէս են, որ եթէ մի
կին այրիացաւ և կամենում է կրկին մարդու գը-
նալ, նա պիտի այդ քայլը մեծ զոհութեամբ ա-
նի, որովհետեւ եթէ իր զաւակների թւում գտնէ
մի տղայ զաւակ կայ, այն ժամանակ կնոջ համար
եկեղեղը անգամ պակասելը պարտաւոր է համար-
վում: Հարսանիքի ժամանակ նուագածոնները (խո-
տոջուրցիները առանձին ձիւղ ունեն դէպի երա-
ժշտութիւն), երբեք դրամական վարձատրութիւն
չեն առնում, որովհետեւ ուրիշի ուրախութեան
ժամանակ, նրանց համոզուեցող, չէ կարելի շա-
հալիական ակնկալութիւններ ունենալ: Եթէ մի
խոտոջուրցի իր սեփական ջաղաց չունի, որ կա-
րողանայ իր ցորենը աղալ, հարեանը, երկրի սովո-
րութեամբ, պէտք է թիւղ տայ նրան իր ջաղացի

վրա անվարձ աղալ ցորենը: Եթէ մէկը եղբն չու-
նի, որ հաւաքած հոնձը դաշտից բերի, հարեան-
ները պէտք է նրան իրանց եղբներ տան, և այլն:
Խոտոջուրցիները իրանց աշխատասիրութեամբ,
իրանց տոկոսութեամբ շատ նման են մեր ագու-
լեցիներին: Նոյն ընկերական ոգի, որ կայ խոտո-
ջուրի մէջ, տիրապետում է և Զէյթունի հայերի մէջ,
որոնք նոյնպէս անխառն են բնակվում: Զէյթունի
մէջ, օրինակ պատերազմի ժամանակ, բոլոր բնա-
կիչների ունեցածը, գէնքը, վառօդը, հացը, ուտե-
լիքները, բնակարանները, —բոլորը դառնում է ընդ-
հանուր սեփականութիւն:

Եւ վերջացրի փաստերի, իրողութիւնների հետ,
վերջացրի իմ դասախօսութեանս նկարագրական,
մասը: Եւ նախ քան անցնեմ ընդհանուր հայացք-
ներին, թիւրքաց հայերի անտեսական ընդհանուր
գրութեան նկարագրութեանը, իմ սեփական դա-
տողութիւններին և հաւաքած փաստերից դուրս
բերած եղրակացութիւններին, —պարտաւորութիւն
եմ համարում յիշել այստեղ որ իմ հաւաքած
տեղեկութիւնները վերատուգելուն գլխաւորապէս
ինձ օգնել են երկու պարոններ: Մինն է պ. Կա-
րապետ Էֆէնդի Շաբանեան, որ ինքն էրղրում
է Հայաստանի հետ, միւսը «Մշակ» աշխատակից
պ. Գրիգոր Նիկողոսեան, որ որպէս ռուսաց
զօրքի օֆիցեր, վերջին պատերազմի ժամանակ
զօրքի հետ Հայաստան էր գնացել, ուրեմն նոյն-
պէս լաւ ծանօթացել է Հայաստանի հետ:

(Կը շարունակվի)

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՒԲԵՆԻԼԵՆ ԿԼԱՐՈՒՐՅԱՆ մօտ Զուգարովի տան մէջ
զտնված Ն. Ա. ԴՈՍԱՐԱՅԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿՆԵՐԻ
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գրաւով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, զը-
նում է առեւտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխա-
ռութեան ՏՈՄՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով կատարում է
զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը զտնվում է «ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ԵՒ ՏԵ-
ՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարե-
լի է տեղեկութիւններ ստանալ «ԲԵՂԵՐԵՆԻՆ» «ԲՐԵՆԿԱՆ» և
ԼՈՒԵՒՏՐԵԿԱՆ գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քա-
ղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի
պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՆՈՐ ԵՇԽԵՏԱՆԻՔՆԵ-
ՐԻ ԿԼԱՐՈՒՐՅԱՆ: Ի նկատի ունենով «ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ»
ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւի-
րում են ԲՆԿԵՐԵՆԵԼ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև
յուլիսի 1-ը:

2-5

Ներկայ 1879 թ.ի յուլիսի ակզբից, տեղութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի մէջ հրատա-
րակվելու է ռուս «Кавказ» լրագրի չափով, քաղաքա-գրականական շաբաթաթերթ «Է. Շ.
խա տ ա ն ք» ռուս և հայ լեզուներով հետեւեալ պրոգրամով:

- 1) Դատաստանական ժամանակագրութիւն.
 - 2) Տեղական կենսիկ ռուսամասերութիւն, թէ անտեսական, թէ վիճակագրական ու թէ
գիւղատնտեսական կողմերից:
 - 3) Գրականութիւն, գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ,
լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Վճնագատութիւն ռուս, հայ և
օտարազգի գրականութիւնների:
 - 4) Քաղաքականութիւն, քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի
հարցերի նկատմամբ:
 - 5) Մանր բուրեր:
 - 6) Մանաւոր յայտարարութիւններ:
- «Է. Շ. խա տ ա ն ք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, Թիֆլիսում, առանց տու-
հան հասցնելով 5 ռուբլ:
Ռուսիոյ զանազան քաղաքներ զրկելով 5 ռ. 50 Կ.
Փոստային դանակցութեամբ զրկելով արտասահման 6 ռուբլ:
Ստորագրութիւն ընդունվում է Թիֆլիս Կենտրոնական գրադաճառանոցում:
«Է. Շ. խա տ ա ն ք» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պա-
հանները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գա-
լը ուղարկել ուղղակի «Է. Շ. խա տ ա ն ք» լրագրի նախագրին այս հասցեով. Григорію Тер-Мелік-
сетову, редактору газеты "Трудъ", въ Сололакахъ, на Сололацкой ул. у Вознесенской
церкви возлѣ стараго моста въ Д. Михайла Галуцкова подъ № 110.
Ներքին և անվաղ յօդուածներ «Է. Շ. խա տ ա ն ք» նախագրութիւնը ընդունում է մի-
միայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով:
Խմբագիր-հրատարակող Վրիգոր Տէր-Սեդրիսեղեկեան:

Ներքին տան հայոց Ազգային-հոգեւոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը
լինելու է հետեւեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Դասատուներ	Առարկաներ
Մայիսի		
2	Ե. Զ.	Ռուսաց լեզու
3	Ե. Զ.	Հայոց լեզու
7	Ե. Զ.	Ճրանխական լեզու
11	Ե. Զ.	Բնագիտութիւն
14	Ե. Զ.	Սրբաբան և երկրագիտութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժան- մունքները	Բոլոր առարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	Հայոց լեզու և թուաբանութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Մնացած առարկաներից
18	Ե.	Կրօն և ճամար
22	Ե.	Նիւթընական պատմութիւն
23	Ե.	Մանկավարժութիւն
25	Ե.	Ռուսաց պատմութիւն
26	Ե.	Կրօն և Աստուածաբանութիւն
28	Ե.	Ֆիզիքա և բնագիտութիւն
30	Ե.	Հայոց մատենագրութիւն
31	Ե.	Հայոց պատմութիւն
Յունիսի		
4	Ե.	Աշխարհագրութիւն
5	Ե.	Բնագիտութիւն մատենագրութիւն

I, II, III և IV դաստանաց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենագրութիւնից
լինելու են I և II դասա. ունց մէջ մայիսի 22-ին և 23-ին իսկ III և IV դաստանաց մէջ
մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26-ը լինելու է գլխի ճաշու 5¹/₂ ժամից և այնու-
հետեւ առաւօտները 8 ժամից. իսկ պատրաստական դաստանաց քննութիւնները լինելու են
նոյնպէս առաւօտները:
Պաշտօնակատար տեսչի Արշակ Նահապետեանց

Ներանձան հրապարակի վրա ՔԱՄԱՐՏԵՎԻ կարապետարայի դէմ ուղէմը № 11. տան
վերի յարկում վարձով տրվում է մէկ ԳԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարապետը և առաւօտ-երեկոյ
սամովարով. դաշինքը մի բալիօն ունի իր առաջ: Դիմել է ամեական 40 ռուբլ: Բացի
դաշինքը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆԱԿՆԵՐ կարապետով,
ծառայով, սամովարով և լուսաւորութեամբ. այդ սենեակները ամեական արժէին 25, 20 և
15 ռուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս բնակել: Հարցնել մի և նոյն տան
դրան առաջ միւր ծախող ՅԱԿՈՎԻՆ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
(ԱՐԺՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՈՒՄ)

Վաճառում են հետեւեալ հայերէն գրքերը՝	Բ. Կ.
1. Մինաս Զեբազ՝ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	1 —
2. — — — — — ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	1 —
3. — — — — — ԻՆՉ ՇԱՀԵՑԱՆԻ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺ	40 —
4. — — — — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՅ	60 —
5. Առաքելեան ԳԵՈՐԳ. ՌՈՂԼԵՍՏՈՆ (Թարգմ.)	60 —
6. ՍՈՒՆԻՈՒԿԵԱՆ ՊԵՊՈ Կոմէդիայ 3 ար.	60 —
7. Բարբո՝ երեսաների առ իրենց ծնողք պարտ.	40 —
8. Տիւզէնձեան Տոմարակալութիւն (կազմած)	2 —
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3 —
10. Պող և Վիրգինէ, ոսկէկազմ, գրաբար	3 50

Շուտով լոյս կը տեսնի Ավետարանի ԹԱԽԱՄԱԶ ՄԵՂՈՒ անունով գրքոյկը
Թարգմանութիւն օր. ՏԵՐ-ՄԱՐԿԱՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով, գինը լինելու է
40 Կ. գրքոյկը արժանացել է առաջին ՊԱՐԳԵՒԻ Յրէքէեան ընկերութեան. վաճառ-
վելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Անցագիրների կանոնադրութեան XIV հա-
տորի 1 յօդուածի համեմատ ոչ ոք իրաւունք
չունի հեռանալ իր բնակութեան տեղից ա-
ռանց օրինաւոր վկայութեան կամ անցագրի
(յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15
նոյն կանոնադրութեան): Նոյն կանոնադրու-
թեան 141 յօդուածի համեմատ մէջ չանցող
բոլոր կարգի զիւղացի և ծառաները, որոնք
իրանց բնակութեան տեղից բացակայ են և
զտնվում են կայսերութեան զանազան տեղե-
րում 30 վերստ հեռաւորութեամբ իրանց
բնակութեան տեղից արհեստներով կամ աշ-
խատանքով ապրելու համար, պարտաւոր են
տալված անցագիրներ ունենալ: Մատուցութեան
մէջ զտնվող և ծառայութիւնից դուրս եկած
աստիճանաւորների համար, նոյնպէս հոգեւո-
րականների, կուսակիցների, սոսնական և
անձնական աշխուժականների, սրանց պարիսն-
րի անցագրի վերցնելու ձեւը մեկնված է ան-
ցագիրների կանոնադրութեան XIV հատորի
51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75,
89, 92, 112, 118, 119, 139, և 142 յո-
դուածները մէջ: Նոյն կանոնադրութեան 41
յօդուածի համեմատ ժամանակամիջոցը ան-
ցած անցագրով ոչ ոք մի տեղ ապրել չէ
կարող: Այն անձները, որոնք ժամանակամի-
ջոցը անցած անցագիրներ ունեն, կամ նրանց
կորցրել են, պարտաւոր են անցագիրների կա-
նոնադրութեան 42 և 211 յօդուածների հա-
մեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայու-
թեան կամ ժամանակամիջոցը անցած անցա-
գիրներով ապրողները, բացի այն որ պէտք է
տան հարկաւոր վճարը անցագրի համար Հաշ-
տարար դատաւորներից որոշված պատիժների
կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ
ենթարկվում են դրամական տուգանքի, որ
լինելու օրը 15 կոպէկից և ընդհանուր դու-
մարով 10 ռուբլուց ոչ աւելի: Նոյն տուգան-
քի ենթարկվում են և նրանք, որոնք իրանց
մօտ պահում են մարդկերանց առանց անցա-
գրի, կամ ժամանակամիջոցը անցած անցագրով:
Վերև մեկնած հանգամանքները ի նկատի
ունենով առաջարկում են Թիֆլիսի բնակիչնե-
րին, եթէ նրանց մօտ բնակվում են կամ ծա-
ռայում են այնպիսի մարդիկ, որոնք օրինա-
ւոր անցագիրները չունեն, կամ որոնց անցա-
գիրների ժամանակամիջոցը անցել է, պղ-
պիտներին ներկայացնել իմ վարչութիւնը,
հաշուաւ դէպքում այս պահանջը չը կա-
տարողները դատաստանի ենթարկվեն Հաշ-
տարար Դատաւորներից որոշված պատիժների
կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ:
Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համա-
րում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին,
որ այն անձներն են, որոնք կը բռնվեն ա-
ռանց վկայականների կամ անցագիրների եր-
բէք չեմ յանձնի մէկի պատասխանատու-
թեանը, այլ էտապով կուղարկեմ իրանց հայ-
րենիքը: Մայիսի 6 1879 թ. Թիֆլիս: Թիֆ-

լիսի գլխաւոր Պօլիցիմէյստեր գնդապետ Մեր-
կլինգ:
2-3

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵ-
ՐԻ ՓՈԽԱՐԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱ-
ԿԸ պատիւ ունէ յայտնել ընկերութեան պ.
պ. անդամներին, որ ընկերութեան ԲՆԱ-
ԿԱՐԱՆԸ արդէն վարձված է Զիթախովի
տանը, Գոյովիսկի պրոսպէկտի վրա և խն-
դրում է անդամական ՏՈՒՐԲԸ ՀԸ վճա-
րող պարոններին, նոյնպէս ընկերութեան ան-
դամ գրով ու, փող վճարելու և տոմսակ ստա-
նալու համար ցանկացողներին դիմել ընկե-
րութեան ստարչինա Պ. ՄԵՀՐԱԲՈ-
ՎԻՆ, Գոյովիսկի պրոսպէկտի վրա, Ծիօն-
վի տանը, խանութ № 5:

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՑԻՆ
ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր
ներկայութեամբ ՄԱՅԻՍԻ 22-ին լինելու
է ԱՃՈՒՐԴ առանց ԿՐԿՆԱՃՈՒՐ-
ԴԻ ՄԵՏԵԼԻ ամրոցի և ԲԱՆՏԻ
համար երեք ստուարանի ՓԱՅՏ հասցնե-
լու համար: ՄԵՏԵԼԻ ամրոցի համար
հարկաւոր է 149 սաժէն և 1 արշին, իսկ
բանտի համար 136 սաժէն: Փայտը պատ-
րաստվում է եկող 1880 թուականի համար:
2-3

200 տախա. ՏԵՄԵՆՏ (Պորտլանդի)
ստացված է: Դիմել արեւմտեկտոր պ. ՄԿՈՅԻԱ-
ՆԻՆ, Արտեսայնայա փողոցում, Տէր-Լուկասո-
վի տանը:

ՄԼԻԵՄԵԼՆ-ՅՈՎՆԵ-
ՆԵԼՆ ՕՐԻՈՐԵԼՑ ուսում-
նարանի տարեկան քննութիւնները
լինելու են հետեւեալ կարգով.—

Մայիսի 15-ին Կրօն և Արքայան
Պատմութիւն

16 և 17 Հայոց լեզու

19 Ռուսաց լեզու

22 Թուաբանութիւն

25 Բնական գիտութիւն-

ներ և Աշխարհագրութիւն

Տեսուչ ուսումնարանի.
Յ. Զիգիանեանց